

Ե Ր Ե Ք

Թ Ա Գ Ա Ի Ո Ր Մ Ո Գ Ե Ր Ո Ի

Ջ Ր Ո Յ Յ Ա

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ի Թ Ե Ա Ն Մ Է Ջ

Ե Ի Ա Ն Ո Ր Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ի Թ Ե Ա Ն Մ

Բայց և աստանօր ի հասանել հզօր և պատուաւոր արանցն առաքելոցն ի յՈգոստոս կայսերէ ի մայրաքաղաքն Գոգայ՝ ի կատարման ինն ամսեան, և հինգօրեայ աւետեացն Գաբրիէլի առ սրբուհի կոյան Մարիամ. ուստի և ի փրկուէտ աւուրն՝ որ է չորեքշաբթ, յորում և հինգշաբթ լուսանայր, վասն զի և այնպէս թուեն իմաստունքն և Երբայեցիքն: Արդ՝ ի յիններորդ ժամու աւուրն չորեքշաբթին մտին իշխանքն հոովմայեցիքն ի քաղաքն Գոգայ, և երթեալ պատմեցին քաղաքորին Գոգայ, որոյ անուն կոչէր Չահաուն, որ թարգմանի յուսաստու. և էր յազգէն Եմբանայ՝ որդւոյն Աբրահամու: Եւ փութանակի պատրաստեցաւ կոչել զնոսա, մանաւանդ իբրև գիտաց եթէ Հոովմայեցիք ևս են, և յարեմտեայ աշխարհէն եկեալ զամիսս ինն, և զհինգօր ի ճանապարհի ելով անհանգիստ՝ ըզցերկն ամենայն և զցայզն՝ ըստ հեշտութեան ճանապարհին: Չարմացեալ թագաւորն և հիացեալ յոյժ. և նոքա ետուն զհրովարտակն ի ձեռս նորա. և նա ընկալաւ, այլ և քաղցրացաւ ի տես նոցա. և հրամայեաց մեծաւ պատուով բազմել, և սկսաւ խօսել ընդ նոսա լրջմտութեամբ՝ բերանով և լեզուաւ իսկապէս թարգմանչի: Յինն ժամէ չորեքշաբթով աւուրն, մոռանալով զընթրիս երեկոյին, մինչև աւրհնեալ պահու լուսապայծառ գիշերոյն՝ յորում և հինգշաբթ լուսանայր...: Եւ էր հրովարտակն ի ձեռս թագաւորին. և տայ նա ի ձեռս ատենադպրին, որով և զամենայն ազգաց գիրս գիտելով նա: Եւ իբրև սկսաւ ընթեռնուլ՝ յանկարծ և յեղակարծ ժամուն երրորդի գիշերոյն այնորիկ ճառագայթեալ լոյսն գերազանց՝

աստղանման տեսեամբ՝ առաւել ևս քան զարեգակն թափանցիկ լուսով ի վերայ քաղաքին և ապարանից արքային Չահաունոյ թափանցիկ լինելով: Եւ ոչ էր նա ի հաստատութեան երկնից, այլ և թուէր կարի ևս խոնարհագոյնս. ուստի և այնպէս էր՝ զի թէ այնու ճառագայթիւք ի բարձրութիւն երկնից երևեալ ևս էր, և մենայն արարածք լի ևս լինէին լուսով ճառագայթարձակ փայլմանն. բայց նոցա աշխարհին միայն երևեալ, ուր և խորհրդողն Աստուծոյ սահմանեալ էր յառաջագոյն: Եւ տեսեալ զայն թագաւորին՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց՝ երկրպագելով, և փառս վերառաքէր բարձրելոյն Աստուծոյ... զի և ի նմին ժամու յերրորդ պահու գիշերոյն (ծննդեան Քրիստոսի) և նորայն աստղն երևեալ մեծապայծառ փառօք յաշխարհն Գոգայ և Մոգայ, ըստ այնմ: Տեսաք զաստղ նորա յարեւել, և այլն...:

Եւ թագաւորն զգիշերն ամենայն պշուցեալ ևս կայր ընդդէմ աստեղն. նմանապէս և աշխարհն արեւելից որոց ազգէր հրամանն՝ առ տեսութիւն ծերոց և տրդայոց. ուստի և առ վաղիւն նոյնպէս երեւէր ճառագայթարձակ փայլմամբ ընդ արեգակնային ճառագայթիցն, առաւել քան զնորայն ունելով զեթնպատիկ զպայծառութիւն արփիահրաշ լուսոյն. նա և լոյս նորա քաղցրահայեաց ամենեցուն ի տեսանել, և ոչ հարկանել շլացուցանէր զհայեցողն առ նա որպէս արեգակն. . . . Եւ առ վաղիւն հրամայեաց թագաւորն ընթեռնուլ զհրովարտակն՝ զիւրն և զայլոց թագաւորացն՝ որք էին ամենեցեան մի ազգ յորդոցն Աբրահամու: Եւ իբրև ծանեաւ խորհրդով զիրացն զօրութիւն, վաղվաղակի առաքեաց առ նոսա՝ փութանակի գալ առ ինքն: Եւ եկեալ ընթեռնոյն իւրաքանչիւր ըզգրեալն առ իւրեանս ի թագաւորէն Հոովմայ. և ընկալեալ յօժարութեամբ զհրաման աշխարհագրին, անկով զայն ըստ հաճոյից նորա ևս առաւել քան զոր խնդրէրն: Օ՛ն անդր և ինքեանք ժողո-

վեալ զամենայն իմաստունս և զմեզս, և բացեալ զգիրս իւրեանց՝ քննելով ի վեալայ աստեղն երևելոյ. և գտանէին զպատուէրս նախնի հօրն իւրեանց Աբրահամու, այլ և ծանեան իսկապէս զառածն Բաղասամայ, զոր և ամբարձեալ զձայն իւր նախագուշակ լինելով զալստեան որդւոյն Աստուծոյ, որ և ասէ իսկ, իջագեցէ աստղն Յակովբայ, այսինքն Բանն ի ծոցոյ Հօր, և յարեցէ այլ յիսրայելէ. զմարմինն ասէ, զոր էտո ի սրբոյ կուսէն... Այլ և հրամանն մեծ արքունի փութացուցանէր զմեծամեծ իշխանսն վասն աշխարհագրին, ևս առաւել վասն երկարածի՞գ ճանապարհին: Ուստի և զերիս ամիսս պատրաստեցան ամենայնիւ զնալ զճանապարհայն. նա և թողեալ իւրաքանչիւր ի նոցանէ վերակացուս ի զաւտոս իւրեանց, կատարելով զհրաման աշխարհագրին խնդութեամբ բազմաւ: Ուստի և ի Բարձրելոյն Աստուծոյ վարկանէին զիս իրացն իբրև զիմաստունս և զճանճարեղս: Իսկապէս և յարդեանցն է իմանալ զիմաստոս քաջութեան նոցա առ ամենսեանս: Վասն զի յորժամ եկն Աղեքսանդր Մակեդոնացի յԵրուսաղէմ, և եմուտ ի տաճարն տեսնէ և երկրպագեաց անդ Աստուծոյն իսրայելի, և ամբարձեալ զաչս իւր յերկինս և ասէ մեծաձայն. Մեծ ես Տէր, ամենակալ Տէր. և ընծայեաց ի տաճարն անօթս ոսկւոյ և արծաթոյ... Եւ իջեալ ի Բաբելոն անհուն զօրօք բազմօք, և հարեալ զարքայն Բաբելոնի զԳարեհ և զամենայն զօրս նորս սպանմամբ սրոյ: Եւ լուեալ զհամբաւն բարի զոր արարին թագաւորքն Գոգայ և Մոգայ՝ Սամաղիէ և Նասսուն և ամենայն ազգ որդւոցն Աբրահամու... Եւ Աղեքսանդր ելեալ ի Բաբելոնէ՝ զնաց յաշխարհն նոցա. թագաւորն Գոգայ Սամաղիէլ և թագաւորն Մոգայ Նասսուն՝ տասնեքին ընկերօք իւրեանց, և կառօք և հծեւօք աւելի ևս քան զերկոտասան բիւրս, և նա ընկալաւ զնոսս մեծաւ պատուով, և ողջունեալ զիմեանս՝ արար նոցա ուրախութիւն

զբազում աւուրս: Եւ նոցա շնորհ ունէին նմա վասն տաճարին տեսնն և վասն քաղաքին Երուսաղէմի: Եւ առաջնորդեալ նմա՝ անդուցին զնա յայնկոյս գետոյն Գեհնոնի. և կոտորեցին զամենայն թուրքաստան և զՀնդկս վերե՞ն, իբրև վրէժ-խընդիր լինելով թագաւորացն Գոգայ և Մոգայ, զոր և նենդութեամբ կոտորեալ էին նոցա յառաջ ժամանակաւ, զոր և կանխաւ ասացաքս: Եւ օժանդակեալ իջին յամենայն աշխարհն Հնդկաց, իբրև զօրացեալ եղին նոքօք. և մենամարտեալ ընդ Պովրոս հսկայ՝ Աղեքսանդր արքայ սպան զնա՝ տրեւելով տանն և աշխարհի նորա: Եւ շրջապատեալ ընդ արևելեան հիւսիսական աշխարհն, և գտեալ ամպարըշտեալ զազգս և զազիսս իբրև քսանւշորս թագաւորութիւնս, և հաւանեցուցեալ զնոսս սրով. սակայն ոչ կոտորեաց ի սպառ, վասն զի յազեալ աս էին արեամբ ամպարըշտացն. և իբրև ազդեալ նոցա Սաստուծոյ, զի ոչ էր իսկապէս ծագելոց առ նոսս լուսաւորութիւն փառաց աւետարանին Քրիստոսի. և տարեալ արգելեցին զնոսս ընդդէմ մեծամեծ լերամբք արևելեան և հիւսիսի ծովապատ. և փակեալ կնքեցին մարգարէութեամբ: Մի՛ ևս ելանէ նոցա մինչև ի ժամանակսն վերջինս, որպէս և ասէ իսկ: Եւ հարկաւորէ զանալ ի կարգ առաջին պատմութեան:

Աստանօր էր թիւ Օլոմպիաթին, զոր կարգեալ էր Եբրայեցոցն, զոր իմաստունքն Յունաց Բեստեքեստոն անուանեն, և Հայք՝ նահանջ կոչեն, էր հարիւր վաթսուն և եօթն, և ի զարեան նային հասարակածն, և պատկեր ատուրն կիրակէ. ելին ի ճանապարհ՝ իբրև պատշաճ և շնորհաւոր համարելով ըստ զիտութեան իւրեանց, (՛ն անդր և յառաջեալ թագաւորն Գոգայ Չանտուն՝ որդի Արտուհայ (բ. օր. Արտաւնայ), յազգէ Եմբանայ, և Աշթաւ թագաւոր Մոգայ՝ որ և նա յորդւոցն Եմբանայ՝ յորդւոցն Աբրահամու, որ էր անդրանիկ ի Քիստուրայ. ելին սոքա քսան և չորս հազար հծեւալս երիվարօք ուրոյն ի հետեակ

զօրաց և ի սպասաւորաց նորա, որպէս օրէն է թագաւորաց: Արին ընդ իւրեանս կնդրուկս՝ որպէս Աստուծոյ, և ոսկի մաւ տանի՝ որպէս թագաւորի՝ խաչանման յօրինուածով. ընդիւրզգեալ ակամբք պատուականօք, և զմուսս անուշահոտ և մեծագին՝ իբրև մեռելոյ, և անթիւ գանձս բազումս՝ ի պէտս թագաւորական ծախուց երկայն ճանապարհին. զի ուր և գնացեն, կարացեն պարգևս մեծամեծս պարգեակ մանեցուն և ճանապարհ և յիջևանս՝ իբրև անուն բարի ժառանգելով, որպէս և վայելէր նոցա: Այլ և յազգէն Եկսանայ՝ Արև և Զոռօգ, որ են թագաւորք Պարսից և Մարաց, նոյնպէս արարին և նոքա գանձիւ և զօրօք բազմօք: Այլ և ի ցեղէն Մաղունայ՝ Զարնոս և Արտալոյ՝ թագաւորք Պարթևից և Ասուրեսանեայց. նոյնպէս պատրաստեցան և նոքա: Իսկ ի զարմէն Մոդոնայ՝ Այրան և Մարագ, որ և նոքա թագաւորք Խուժաստանեայց՝ արարին ըստ կարգելոյ օրինին: Իսկ ի սերէն Եղորկի՝ Ահիշրախ և Տարսնայ՝ թագաւորք Թարսի և կղզեաց զինեցան և նոքա ընդ սահմանեալ եղբարցն իւրեանց: Այլ և յարմատոցն Մովսրայ՝ Մարիի (Մարիի) և Աւիլի՝ որ և նոքա իսկ էին թագաւորք Արարայ և Սարայ վերնոյ, ի կողմանս հիւսիսոյ:

Աստի և պարծանօք զամենայն պատրաստ արարին ըստ անդրանկան եղբորն Զահտունայ՝ թագաւորին Գոգայ: Այլ և որպէս էին նոքա ամենեքեան քաջարիք և իմաստունք, նոյնպէս և գային պատրաստարար՝ յառաջընթացս առաքելով զիմաստունս և զհզօրս հետի՝ աստուածանման աստեղն. և վերջապահս կարգելով զարս հանճարեղս և զարիականս՝ ըստ իջևանացն հասելոց: Եւ ընդ որ անցանէին՝ զմեծամեծս ընծայեալ զանազան պարգևօք նորագունօք, նա և զքաղցեալս կերակրէին բազմազան խորտօք:.. (Մն անդր և քարոզ կարդային վասն որոյ իրաց և հետեւէին: Եւ ամենեքեան լըւեալ և տեսեալ զնոսս այլ և զաստղն հրաշափառ, տային փառս նորածին ար-

ջային... Եւ զի գիտէին ևս ի զրոց և յաւանդութենէ թէ ո՛րք էին նոքա և յուրօց. նա՛ և զճանապարհն ընդ որում և հարցն նոցա հասանէր զնալ յարեկեալ՝ ընդ կողմն հիւսիսի, ի Գոգ և ի Մագոգ: Եւ աստանօր մինչ գային՝ ի նոյն հետս՝ բերելով զնոսս աստեղն, և իբրև եկին ի թառան քաղաքն՝ ի հայրենի բնակութիւն իւրեանց, և գտեալ անդ յառուրեան ազգէն իւրեանց՝ խնդացին յոյժ. և ընծայեալ զնոսս ոսկով և արծաթով, և պատմեցին նոցա զոր ինչ արար ընդ նոսս Աստուածն Արրահամու, իսահակայ և Յակոբայ՝ հարցն իւրեանց:..

Եւ եհաս համբաւ զայստեան նոցա յԵղեսիս՝ առ Աբգար թագաւորն Հայոց, և նա ել ընդ առաջ նոցա. և էր մանուկ տիօք, որ և ի նմին ամի ընկալեալ էր զթագ պատուի ի մեծ թագաւորէն Հայոց. և բերեալ զնոսս մեծաւ պատուով՝ եւ մուտ ի քաղաքն Ուրհայ. և արար նոցա ընդունելութիւն մեծ, և զիրաքանչիւր ի թագաւորացն ընծայեաց նմանապէս. և նոքա ի մեծագին ականց արարին նմա փոխադարձ սիրոյն: Եւ փութային զնալ հասանել որում ցանկայինն: Եւ նա ելեալ յուզարկէր զնոսս երզուք և պարասաց զասիւք և հացկաց կատակօք, և խաղարկեալք արամբք ճարտարօք զքոսանս առնէր նոցա: Եւ իբրև հեռի եղեն ի քաղաքէն իբրև միջօրեայ ճանապարհաւ, հարցանէին ընդ Աբգար, զի նա ուսեսալ ևս էր ի հնաբուն ժամանակագրաց, թէ յորձում վայրի կտորեաց Յովսափ զերկոտասան հազարսն ի հեթանոսաց, և զթագաւորսն, և զԱսորիս՝ հրձիգ և զՄիջագետս Սորան (ք. օր. Սորան). և նա հարցեալ ընդ ատենադպիրսն, և նոքա ցուցանէին ի բացեայ զձորն Աղտից. և նոքա ընդ այն նայեցեալ՝ տային փառս Աստուծոյ իսրայէլի հարցն իւրեանց: Եւ աղաչէին զԱբգար զառնալ անդրէն. և նա ոչ առ յանձն, այլ եկեալ ընդ նոսս մինչև ի Գետն Եփրատ, և տեսեալ զքաղաքն որ յայնկոյս գետոյն կոչի Զուրուս, զի այն էր քաղաք Գուարի, զոր շինեալ

յորինեաց առ Եփրատ գետովն, որպէս և ուսեալ ևս էր յԱստուծոյ վասն իւր, աւելով. Իդից ի ծովու զձեռն նորա, և ի վերայ գետոց զաջ նորա : Եւ աստղն արփափայլ եկաց ի միջասանմանն ի վերայ մեծայաղթ գետոյն, ուր խաղը նաւացն լինէին՝ աներկիւղ պահեալ զնոսա : Եւ հրամայեաց Արգար արքայ բերել զաւմենայն նաւս և զնաւակս ի վերուստ ի վայր իջանելով և ի ներքուստ ի վեր ձգելով զամենայն գետոյն, Եւ անցուցին զամենեսեան անփնաս, և Տէր Ինքն էր ի մէջ նոցա, և աստղն լուսապայծառ հովանի էր նոցա : Եւ Արգար տուեալ զանձս բազումս ի մեծ արքայն Չահտուն՝ ընծայել զնորածին արքայն, և առ ի նմանէ՝ երկրպագել ընդ նմա : Եւ ինքն ողջուենալ զնոսա՝ դարձաւ ի տուն իւր :

Օն և անդր և նոքա յուրի անկեալ զնացին ընդ աստուածադիր սահմանս՝ որ յառաջագոյն լեալ ևս էր իւրայէլի, գային ընդ այն առաջնորդութեամբ աստեղն՝ որ և ինքն էր զօրութիւն Աստուծոյ, Եւ եկեալ ի Պաղեստին և Գերերայ, և հասեալ ի ծովն Տիրերեայ, և եկեալ ի քաղաքն Սամարիայ. և հուչակ հարկանէր համբաւ զալտեան նոցա ի մեծ մայրաքաղաքն Երուսաղէմ, և յամենայն Հրէաստան և որ զնովաւ ... և սահն. Ո՛ր է որ ծնաւ արքայն Հրէից, և այլն : Եւ նոքա (Երուսաղէմացիք) երկուցեալ ի բազմութենէ զօրացն, փակեցին զըրուսն քաղաքն ... Եւ Հերովդէս խոստացաւ պատիւ մեծ առնել նոցա սիրով. և ինքն խորհէր հանդերձ գործակցովն իւրով սատանայիւ, և պատրաստեաց առ ժամայն բազում և ազգի ազգի դեղս մահաբերս, թերևս կարասցէ կերակրօք և ըմպելիօք կորուսանել զնոսա : Եւ զիւրօք ընդ Հերովդէս խնդրէին վասն մանկանն արքայի՝ իմաստունքն և հօրքն, որ զամիսս երեքտասան յուրի անկեալ զային անմուլբ և ուղիղ ճանապարհաւ ի հիւսիսոյ, իբրև առիթմով յաջոյ կողմանէ ի հարաւ՝ մինչև ի քաղաքն յԵրուսաղէմ. վասն զի աստղն հրաշափառ բերեալ

մինչև ի դուռն քաղաքին, որ յարևելս կոյս, անհետ եղեալ ծածկեցաւ ի նոցանէ ... վասն այնորիկ տնօրինեալ ծածկէր Աստուած զաստղն, զի քահանայք և զպիբք ժողովրդեանն բերանօք իւրեանց վկայեցցեն վասն զալտեան (Ս)ծելոյն ... :

Եւ նոքա իբրև լուսն ի թագաւորէն՝ զնացին. և իբրև շուրջ ածեալ զքաղաքան՝ ի հիւսիսոյ կողմանէ՝ եկին մինչև ի դուռն Սիոնի, որ հայի ընդ հարաւ և տանի ի Բեթղեհէմ. և ահա աստղն՝ զոր տեսին յարևելս՝ առաջնորդեաց նոցա մինչև եկեալ եկաց ուր էր մանուկն՝ յաստուածընկալ յայրին, որ և ի նախնունն տուն Եփրոնի կոչեցաւ. ուստի և Եփրոն թարգմանի՝ Հող նոցա ի մերումս : Եւ իբրև տեսին զաստղն՝ խնդացին յոթ ուրախութիւն մեծ : Օն և անդր հաւատով զրեցին ի սիրտս իւրեանց. այս է աստղ ծագեալ ի Յակովբայ, զոր ասաց ազգայինն մեր Բաղասամ, այլ և զոր ուսացն յաստուածընտիր հօրէն մերոյ յԱբրահամէ ... : Այլ և ի նմին ժամու մինչ տակաւին ի դուրս քաղաքին ժեմ, և հրամայեաց թագաւորն Գոգայ՝ Չահտուն՝ հարկանել զփողն, արգել առնելով ամենայն զօրացն, և ասաց երկոտասան թագաւորացն՝ իջանել յերիվարացն. նախ ինքն իջանելով և բացեալ զզլուխն և հանեալ զգօշիկս. նմանապէս արարին և նոքա՝ բոկ և հետիոտս զնալով մինչև յարձանն զուսրեթամն՝ զոր կանգնեալ Յակոբայ ի վերայ դամբարանին Հաւքելի, առ յիշատակ նմայ : Եւ իբրև անցին ընդ այն յառաջ իբրև ասպարէզ մի, և խոնարհեալ աստուածատեսիլ աստեղն մերձ առ նոսա. ուստի և կարծէին ձեռամբ հասանել ի նա : Եւ քաջապէս նկատեալ տեսին բազմեալ ի միջի նորա տալիթայ՝ որ բարձեալ ունէր մանուկ աղայ ի գիրկս իւր : Եւ դարձեալ հրամայեաց, և հարկանէին զփողն արգելման. և ասաց քաջարանցն առ հասարակ՝ իջանել ամենեցուն, և լինել քացազլուխ և բուկազնաց հետիոտս. և եթէ ոք գտցի արտաքոյ հրամանին՝ մեռցի ... Եւ իբրև

մերձեցան ի Բեթղեհէմ՝ հարկանէին ըզ-
 փողն ի շաննելոյ և հանգստեան: Իսկ Բեթ-
 ղեհէմացիք երկուցեալ գային ընդ առաջ
 նոցա՝ երկրպագելով, այլ և զարհուրեալք
 ևս ի տեսնէն՝ աստեղ և յազբանագեան
 բազմութենէ զօրացն: Իսկ թագաւորն մեծ
 Չահտուն պշուցեալ ընդդէմ աստեղն, որ-
 պէս թէ ընդ ո՛ր յառաջնորդեալ տանիցի
 գնտա, և նա խոնարհեալ մերձ յերկիր՝
 դիմակ նոցա լինելով, որպէս առնաչափ
 մի, և առ սակաւ սակաւ յառաջ գնալով
 մինչև ի դուրս հովանոցին՝ զոր շինեալ
 էր Յովսեփայ, և մտեալ անդ ի ներքոյ
 բարաւորին, և ճառագայթեալ զհովանոցն
 և զտունն և զայրն աստուածընկալ: Եւ
 զարհուրեալ օրիորդն կոյս՝ ունելով զմա-
 նուկն Յիսուս ի գերկա իւր՝ իրրև ամաց
 երից և միոյ ամի, և փախուցեալ եմուտ
 յայրն, կարծէր ևս թարջել անդ: Մտին
 ընդ նմա Էսթեր և Սողոմէ և Մառի
 դատերքն Յովսեփայ, որպէս ի պատիւ
 և ի սպաս պաշտաման: Եւ ի շնալ աս-
 տեղն ի հովանոցէն՝ եմուտ ի տունն և
 թագաւորքն ընդ նմայ. և ընդ աստիճանս
 աստուածարնակ այրին ի ջանէր հան-
 դարտարար, և պայծառացեալ լուսովն
 ճառագայթէր ի ներքոյ և արտաքոյ՝ իւ-
 րև թափանցիկ ելով: Անդ էին Յովսեփ
 և որդիք իւր. և երկրպագեցին թագա-
 ւորացն, ըսցո ռչ համարձակեցին խօսել
 ինչ, զի այսպէս օրինադրեցան ամենայն
 զօրքն և քաղաքացիքն. յորոյ բերանոյ
 էլցէ բան և կամ ճիկ ի շրթանց՝ մահու
 մեռանիցի, մինչև հրամանն արքունի հաս-
 ցէ և փող հարկանի: Եւ էր մերձ ի
 յաստղն Չահտուն արքայն Գոգայ, որ
 էր յազգէն Եմբանայ, և էր ամաց եօթա-
 նասնից. և զհետ նորա թագաւորն Մո-
 գայ՝ Աշթաւ, որ և նա ի ցեղէն Եմբա-
 նայ, և էր ամաց երեսնից. և զվին նորա
 Արեն թագաւորն, և էր ամաց հնգասա-
 սանից՝ յորդուցն Եկամնայ: Եւ երեքեան
 սոքա մտին զհետ աստեղ՝ ի ջանելով ընդ
 աստիճանս: Եւ յարուցեալ սուրբ կոյան
 Մարիամ՝ ունելով զկոյան զմանուկն Յի-
 սուս ի գերկա իւր: Եւ աստեղն դէմ եղեալ

երթայր երեսօք ի մանուկն Յիսուս: Եւ
 երկուցեալ կոյան սուրբ ի տեսնէն աս-
 տեղն, թէպէտ և քաղցրատես ևս էր,
 զուցէ ասէ, Քնաս ինչ լինիցի մանկանն.
 և տարեալ նստուցանէր զբարձոցն արա-
 բածոց ի զուտ մարդն, իրրև բազմելով
 ընդդէմ տանարին Աստուծոյ, և ինքն
 մերձ կալով որպէս պահապան: Եւ վառի-
 վառեալ աստղն լուսաճաճանչ երիցս
 անգամ, և եկաց ի վերայ զլիսոյ ման-
 կանն Յիսուսի: Եւ իսկոյն հոտ անոյշ
 բուրեաց առ հասարակ ընդ ամենայն
 տիեզերս՝ ըստ այնմ որ ասէն. Նարդոսն
 ետ զհոտ իւր:

Եւ մատուցեալ թագաւորն Չահտուն՝
 երկիր պագանէր ի վերայ երեսաց իւրոց,
 և զհետ նորա Աշթաւ, և զվին նորա Ա-
 րեն. և անցեալ կային ձեռս ի կապ՝ աչք
 ի նա հայելով, և յայնչափ խնդոյն ար-
 տօսք բազում ցողէին, խանդաղատելով
 ընդդէմ մանկանն. այլ և աղերսանօք և
 իմաստական բանիցն զգուանօք, որպէս
 և վայելէր արքայի և Տեառնորդայն՝
 խօսելին ընդ նմայ: Եւ ի շնալ երիցս ան-
 գամ և այլ թագաւորքն կարգ ըստ կար-
 գի երեք երեք երկրպագեցին և նոքա՝
 նմանապէս առաջնոցն, և կացին ի կարգի
 ձեռս ի կապ լինելով ըստ օրինին: Ուստի
 և արքայն Չահտուն նախապատիւ հրա-
 մայեաց լինել թագաւորին թարսսի և
 կղզեաց՝ պատարագս մատուցանել նմայ.
 ըստ այնմ թէ թագաւորք Արարայ և Սա-
 բայ պատարագս բերցեն յուկոյն Արա-
 բացոց: Եւ այլուր, Ամենեքեան ի Սա-
 բայ եկեացեն՝ պատարագս բերելով կըն-
 դրուկ, ոսկի և զմուտ՝ խորհրդով աստու-
 ծատուր իմաստութեանն. որպէս լուան
 իսկ յազգական վարդապետէն իւրեանց
 Բաղասմայ, որպէս այն զի ասաց. Մե-
 ծացի թագաւորութիւն նորա քան զԳո-
 գայն: Ուստի և իմացան զնա թագաւոր
 գոլով, և զի պատմեաց՝ թէ ծագեացէ
 աստղ ի Յակոբայ, և այլն...: Ուստի և
 մատուցին նմայ պատարագս կնդրուկ՝
 որպէս Աստուծոյ, և ոսկի մատանի՝ խա-
 չանման ակամբք պատուականօք ընդեւ

լուզեալ՝ որպէս թագաւորի, և զմու՝ որպէս մեռելոյ: Օ՛ն անդր և անցեալք ի հանդիսի հրամանաւ մեծ թագաւորին Չահտունայ՝ թագաւորն թարսսի և կըղզեաց, Արարայ և Սարայ՝ Ահիշըախ, Տարտնահ և Աւշիր՝, ունելով զընծայս խորհրդականս ի ձեռս իւրեանց պատրաստարար, և եղին ի մտորն առաջի Տեառնորդւոյն արարածոց, և ինքեանք ամենեքեան անկան ի վերայ երեսաց իւրեանց՝ երկրպագելով մանկանն Յիսուսի . . .

Էւ մինչ նոցա զայս ծածուկ խորհրդով մաղթանս առ Աստուածն իսրայէլի մատուցանէին, և մանուկն Յիսուս քաղցրաւ հայեաց և աստուածանման տեսեամբ նայէր ընդ նոսա լըջմտութեանք և ապա խանդաղատեալ ի վերայ եղընծայ պատարագացն, և ձգեալ զբազուկն աստուածային և յինքն ամփոփեալ՝ արկանէր ի վերայ բարձուցն ցնծալից: Էւ տեսեալ թագաւորացն ուրախացան յոյժ, և զրեցին ի սիրտս իւրեանց՝ ընդունելի լինել պարզեացն նոցա, և ի ձայն բարձրաղակեցին՝ աւրհնելով, գովելով, բարեբանելով զԱստուածն Աբրահամու . . .

Էւ առժամայն փոյթ ընդ փոյթ հրամայեցին հարկանել զամենայն փողոսն ցնծութեան և զամենայն երգարանս: Էւ ամենայն զօրացն ատհասարակ իբրև ընդ մի բերան փառս ի վեր առաջէին բարձրելոյն: Ուստի և կարգ ըստ կարգի յօրինեալ կային ամենայն գովիչք թագաւորացն, և յայնչափ զօչումսն փողոցն և յառազին բարբառոց զօրացն շարժեալ ևս լինէր լայնատարած սահմանք Բեթղեհէմի՝ մինչև գալ աղաղակ զոչմանն և հառանել յԵրուսաղէմ: Էւ ապա ևս առաւել զողայր Հերովդէս ի զոչմանէ փողոցն և զօրացն: Որ և ի նմին ժամու թագաւորն երկոտասան դարձան առ Մարիամ մայրն Յիսուսի, և երկրպագելով հարցանէին զողջամբ լինելոյն, նմանապէս և սուրբ քահանային Յովսեփայ

և նորայոցն, և յոյժ մեծարեցին զնոսա՝ իբրև զընտրեալս և զմերձաւորս Աստուծոյ:

Էր ժամ երրորդ և պատկեր աւուրն միաշարաթ իբրև յանդիման եղեն Տեառն: Օ՛ն անդր և մինչև ցերեկոյն ոչ թողացուցին ումեք մտանել անդ, բայց միայն թագաւորն երկոտասան կացին ի սպաս պատուի Տեառն: Ուստի և ի նոսա նկարեցաւ խորհուրդ երկոտասան Առաքելոցն: Նա՛ և զօրքն ամենայն կային փողովք և ազգի ազգի արուեստական երգարանօք. . .

Էւ առ վաղիւն դարձեալ մտին երկոտասանքն երկրպագելով: Էւ յառաջեալ մեծ թագաւորն Չահտուն, և զհետ նորա Աւթաւ, և զլինի նորա Արևն, և ունէին զգանձս յանօթս ոսկեղէնս, և բացեալ զայն՝ ցիրկացան առնէին զօրն ողջոյն ամենայն թագաւորքն ի վերայ տանեաց այրին և հովանոցին: Էւ եկեալ արք և կանայք, ծերք և տղայք Բեթղեհէմի և որք ընդ աշխարհագրաւն մտեալ էին ի գիրս արքունի, ժողովէին զգանձս առ ի պէտս կենաց՝ մինչև յազգեցան: Էւ այնպէս արարին զաւուրս եօթն՝ մինչև կատարեցին զօրքն ամենայն զերկրպագութիւն արարչին Յիսուսի, այլ և ամենեքեան արժանացան տեսանել և երկիր պագանել անտեսանելոյն հրեշտակաց:

Օ՛ն և անդր, կացեալ զաւուրս տան, և պատրաստեցան դառնալ անդրէն առ Հերովդէս, որպէս և ժամ եղեալ էին նմայ . . . Այլ և օ՛ն անդր յուրթ և ի տասներորդ աւուրն զրեցին պատասխանի կայսերն Օգոստեայ՝ վասն աշխարհագրին, և վասն գնալու իւրեանց անդ. ետուն և զհրովարտակն Արքարու, զի ընդ այն ժամանակս հնազանդեալ ևս էին Հայք և Պարսիկք և Ասորեստանեայք Օգոստեայ կայսերն. և ընծայեալ զառաքեալսն առ ի նմանէ ուղարկեցին զնոսա: Էւ ինքեանք հրամանս ատեալ ի տեսեանն չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց:

Ուստի և ի տասն Մայիս ամսոյ անցեալ ընդ Յորդանան, ուր Տէրն իակ

1. Կարգաւու և Արարչի:

յետոյ մկրտեցաւ, և գնացեալ ի Դամասկոս, և անտի անցեալ ընդ գետն Եփրատ, ի հուն անցիցն թագաւորացն Քարղէացոցո՛ւ մինչ գերէին զԵրուսաղէմ: Եւ հասեալ ի մեծն Բարեղոն, և ել արքայն Արշարի ընդ առաջ նոցա բազում փառաւորութեամբ, որպէս օրէն է Քարղէացոցո՛ւ առատաձեռն լինել ի մտանել թագաւորի և յեկանելն: Եւ նոքա պատմեցին նմա զոր տեսին և վասն որոյ աշխատեցան: Եւ Արշարի երանեաց ըզնոսա, որ արժանի եղեն այնպիսի աստուածային տեսլեանն: . . . Օ՛ն անդր և բազում պատուով յուղարկեալք և նոքա ի Բարեղոնէ՛ եկին յաշխարհն իւրեանց. և ընդ բազում աշխարհս և զաւստս ընդ որ անցանէին՝ քարոզէին վասն նորածին Աստուածորդոյն, զոր և աջօք իսկ իւրեանց տեսին և ի գիրկս ընկալան . . .

Եւ ինքեանք թագաւորքն երկոտասանքն հրամանաւն Աստուծոյ կացեալ կենդանի, մինչև եկին Առաքեալքն փրկագործ աւետարանաւն քարոզել զՔրիստոս Քրիստոս: Եւ եկն Աղղէ՛ աշակերտ առաքելոյն Թաղէոսի՛ առ նոսա հրամանաւ Հոգւոյն սրբոյ, քարոզելով զՔրիստոս Պարսի և Մարաց և Պարթևաց, Ասորեստանեայց, Խուժաստանաց և Բարբելոնի, օ՛ն անդր և Գոգայ և Մոգայ և ամենայն գաւառաց՝ որ ընդ ձեռամբ երկոտասան թագաւորացն ևս էին: Որ և ինքն իսկ Աղղէ մկրտեաց զԹագաւորն Գոգայ՝ Զաստունն, և զԹագաւորն Մոգայ՝ զԱլթաւ, և զԹագաւորն Պարսից և ըզՀայոց զԱրևն, նմանապէս և զընկերսն նոցա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. զի նա եղև անդ առաջնորդ և հրամանատար, հաստատելով եկեղեցի ի վերայ վիժին, անդդուելի վիժին հաւատոյ, և կարգեաց անդ քահանայս և սարկաւազունս, քարոզելով նոցա ըզՔրիստոս Աստուած »

Յիշատակարանս քաղուածօրէն մէջ բերելէն վերջ՝ ներուի ինձ ընել հոս ինչ ինչ համառօտ դիտողութիւններս անոր կարևոր մասանց նկատմամբ, — զորս դիտմամբ նորագրեցինք, — Ձեզ վերապահելով, յարգելի բարեկամ, անոնց պատմական, աշխարհագրական և ստուգարանական (etymologique) մանրամասն քննութիւնը և կամ ճշդութիւնը: Ա. Դիտել կու տամ՝ որ զրուածիս մէջ ընդհանուր կերպով տիրող գաղափարը — որ բացայայտ կերպով կը շեշտուի գրեթէ ամէն զրոյցի մէջ — այն է, թէ ոչ միայն Արբահամու օրինաւոր յաջորդաց և իւրայէլի երկոտասան ցեղերուն, այլ և ֆետուրոյ կամ կենտուրէն կողմնակի կերպով սերեալ ազգերուն մէջ ևս պահուեցաւ՝ որդւոց որդի և դարուց ի դարս՝ թէ՛ ճշմարիտ աստուածպաշտութեան և թէ՛ Մեհիային կամ Աստուածորդւոյ մարմնապէս ծննդեան գաղափարն ի սուրբ և յանարատ կուսէն, նշանակաւ հրաշափառ աստեղն: Եւ այդ բարձրագոյն ծածկութիւնը, զոր Աստուած յայտնեց Արբահամու, տարածողներն և պահպանողները — նաև հեթանոս ազգերու և արեւելան աշխարհաց մէջ — եղան ֆետուրէն ծնած Արբահամու վեց որդիքը: Այս ըստ ամենայնի պատմական է, վասն զի Մեղ. ԻԾ. 1 — 6 վկայութեան համաձայն է. որուն վրայ հաստատուած Ս. Հարք, և մասնաւորապէս Եփրեմ Ասորի (Մեկն. Մնն. տպ. Վենետկոյ, էջ 85) կը գրէ. « Եւ զի ա՛ռ Արբահամ կին յետ մահուան Սառայի, զի ի ձեռն որդւոց իւրոց, որ լինին յազգս և յազինս և ի տոհմս հեթանոսաց, սփռեցան տարածեցան հաւատք ճշմարտութեան նորա յամենայն գաւառս: Արձակեաց զնոսա առ յինքեանէ, զի քարոզեցեցն զհաւատս ճշմարտութեան հօրն իւրեանց »:

Երկրորդ կարևոր կէտն կեղծ Եպիփանի աւանդածին, — զոր ես կ'ախորժիմ սակայն ծագումով հայկական ևս անուանել, — այն է՝ որ ֆետուրէն ծնած այդ վեց որդւոց ազգախառնութեանն, որոնք

սեան որդւոց ԱրբաՀամու » (այսինքն է՝ յազգաց քնտուրածին որդւոց), անուշ-
 դակի կերպով Պարթև և Հայ Արշակու-
 նինները և՛ Արեւմտեան ընդհատեալ Հա-
 ռատութեան իրեն ազգակից և շարու-
 նակութիւն կարծել կու տայ մեզ, որ
 շատ հաւանական է: Յիրաւի, թէպէտ և
 կիրսոսի ֆետուրածին ըլլալու մասին
 Մ՛ն. Գիրքը լուծ է, սակայն Բ. Մնաց.,
 Էջրի, Գանիէլի և յատկապէս Եսայիայ
 (զ. Խ. 1-4) անոր վրայ այնքան խօսելն
 իսկ կոտան մ'է ըստ ինքեան. այսինքն թէ՛
 Աստուծմէ օծեալ Հրէից այդ ազատա-
 րբէ՛ հոգևորական իմաստով Քրիստոսի
 փրէ՛չին օրինակ ըլլալէ զատ՝ մարմնաւոր
 ազգակցութիւն մ'ալ ունեցած ըլլայ հրէա-
 կան ազգին հետ, ինչպէս որ կ'ենթադրէ
 գրուածիս հեղինակը: Իսկ Հայոց և Պար-
 թեաց մասին աւանդածն ոչ միայն հա-
 ւանական է, այլ և ունի իրեն իրրև
 կուտան պատմական վկայութիւններ:

Մեծն Վարդան (տես Մեկն. Կենդոց)
 այսպէս կը գրէ. « Իսկ Աբբահամու առ-
 նուրն զկենտուրա, որ է խնկեայ, զի ա-
 մննայն ազգ սմա է երկնաւոր խոստումն,
 և մի՛ ոք զինքն աւտարացուցէ յիւր սե-
 փական արարչէն. ուստի ծնան վեց որ-
 դիք՝ քարոզք վեցակուսի աշխարհիս.
 ուստի Արշակունիք և Պահրսունիք, զորս
 ի քաց արձակեաց յինքննէ (Աբբահամ)
 յարևելս, զի ամենայն յոյս իցէ յայն՝
 որ նստին յերկինս երկնից ընդ արևելս »:
 Անտարակոյս Վարդան՝ Էփրեմի վերոյի-
 շեալ վկայութենէն դուրս ճանչցիր է նաև
 սոյն գրութիւնը, ինչպէս ցոյց կու տան
 « Արշակունիք և Պահլաւունիք » կամ
 Պարթևք բառերը:

Անանունը՝ առ Մերիոսի (տպ. Կ. Պո-
 լիս 1851, եր. 9) Հայկազունի հարստու-
 թենէն՝ Պարթև Արշակունիներու պատ-
 մութեանը անցած ժամանակ, հետեեալ

զաղթեցին յԱրևելս, յառաջ եկած ըլլան
 Պարսիքը, Պարթևք և Հայք. և Պարսից
 Արեւմտեան թագաւորաց առաջինը՝ Կիւ-
 ռոս՝ ուզողով զնեղով « ծնեալ ի վեցե-
 կամուրջը կը կապէ, որ յոյժ հետաքրք-
 րական է. « Ի Դամասկոսէ ասեն՝ գը-
 նացեալ զՄարտակե՛ր զընդոծինն Աբբա-
 Համու՝ փախստական լեալ՝ յիսահակայ,
 և եկեալ քնակեցաւ առ ոտամբ երկուց
 լերանցն որ հանդէպ մեծի դաշտին Ա-
 րայի, յԱրագած կատար և ի Գեղ լեանն:
 Եւ լինին նորա երեք որդիք, Փառոսի՛
 նա է Եղիազար, և Փառախոս կոչեն
 զտեղի քնակութեանն. և փառականն՝
 դաշտ ուրցս և արշաւանաց նոցին, որ
 խառնին յազգ Արամանեկայ »:

Չնայելով որ Անանունի քով (այն է՝
 կեղծ Ազաթանգեղոսեան արձանագրու-
 թեան մէջ) պահուած հայկական աւան-
 դութիւնը՝ իր արտաքին պարագաներով
 անկախ է Եպիփանեանէն, սակայն և
 այնպէս իսկապէս մի և նոյն իրողու-
 թիւնը կը շնչտէ, այսինքն է՝ Աբբահամու
 ընդոծիններուն՝ Հայոց և Պարթեւաց
 հետ ունեցած ազգախառնումը: Մով. Խո-
 ըննացին ընդ հակառակն երկու անգամ
 կը յիշատակէ մի և նոյն իրողութիւնը,
 և երկուքն ալ համածայն եպիփանեան
 յիշատակարանին: Նախ Պատմութեան Ա.
 Գրքի Ա. գլխուն մէջ խօսելով Պարթե-
 ւաց վրայ՝ կ'ըսէ. « Ուստի և թագաւո-
 րեաց Արշակ քաջ, որ ի զաւակէ Աբբա-
 Համու, ի քնտուրական ծննդոց, առ ի
 հաստատել քանին Տեառն առ Աբբահամ,
 թէ թագաւորք ազգաց ի քնն ելցեն »:
 Ապա Բ. Գրոց ԿԸ. գլխում ուզելով տալ
 մեզ Պարթև — Արշակունիներու ցեղաբա-
 նութիւնը, կը գրէ այսպէս. « ՅԱրամայ
 քաներորդ առաջներորդ նահապետ մեզ
 զԱբբահամ աստուածային պատմութիւնքն
 ցուցանեն, և ի նմանէ եղեալ ազգը Պար-
 թեաց: Քանզի ասէ. Յետ մեռանելոյն
 Սառայի՛ առեալ Աբբահամու կին զԲե-
 տուրայ. յորմէ ծնան Եմրան և եղբարք
 նորա, զոր Աբբահամ ի կենդանութեան

1. Այս և Մ. Խորենացոյ աւանգածի նկատմամբ՝
 Խորենացի կու տամ կարգալ Սերիոսի գիտնական հրա-
 տարակէին 5⁰ և 6⁰ Գանձագրութիւնը՝ որ յէջ 20-24:

իւրում մեկնեաց յիսահակայ, արձակելով յերկիրն արևելից: Յորոց սերեալ ազգ Պարթեւաց, և ի նոցանէ Արշակ քաջ, որ ապստամբեալ ի Մակեդոնացւոց՝ թափառեաց յերկիրն Գուշանաց՝ ամա երեսուսն և մի ... և յետ նորա որդի նորին Արտաշէս ... ապա Արշակ նորին որդի ... որ և զՎաղարշակ զեղբարյւր իւր թագաւոր կացոյց Հայոց », ևն:

Յովսեփոս ևս (Հնախ. Ա. գիրք. զԼ. 15) հիմնուած Աղ. Բագմամիլիսի վկայութեան վրայ, հետաքրքրական տեղեկու-

թիւններ կու տայ Քետուրէն ծնած Արրաւամու որդւոց և անոնց զաղթականութեան մասին՝ ի Լիբիա, և Երջանիկ Արարիայէն մինչև կարմիր ծով. սակայն Հայոց և Պարթեւաց հետ ունեցած ազակցութեան նկատմամբ բնու խօսք չըներ: Ուստի ակներև կը տեսնուի՝ որ հայ հեղինակներուս մեզ հաղորդածը՝ ազգային հին աւանդութիւն մ'է:

Ն. Բ. ՍԱՐԳՍԵԱՆ

Շարայարեի

Գ. Բ. Ա. Կ. Ս. Գ. ՎԲ

ԼԷՈՒՐՏԻ

— ԱՌԿՈՄՍՆ —

ԳԱՐԼՈՅ ԲԵՐՈԼԻ

Տագնապալից ուանդահական այս քունին՝ Որուն կու տանք մենք կեանք անունը՝ ի՞նչպէս կը հանդուրժես, Բե՛բոյիս, ի՞նչ յոյսերով կը սնուցանես քու սիրտըդ. ի՞նչ խոհերու, ի՞նչ տաղտկալի կամ բերկրական գործերու կը սպառես այն պարապ ժամերը՝ զոր քեզ թողուցին հին պապերըդ, ծանր ու դժո՛նէ ծառանդութիւն. դատարկութիւն բոյր կեանքս ի՞նչ մարդկային վիճակի մէջ ալ ըլլայ. Եթէ՛ շանքերն, հեթեթեանքներն այն՝ որք չեն Արժանաւոր նըպատակի մը ձըկտիր, կամ պիտ՛ իրենց վախճանին բնու չըհասնին՝ Գատարկութիւն կոչել ի զէպ է ստուգիւ: Գործարար խումբը՝ զոր հանդարտ արշալոյսն Եւ իրիկունը կը տեսնեն՝ երբ անոնք չողագղչտերը կը պատռեն, կը տանին կամ թէ զարման ծափին, տունկին, հօտերուն, իթէ՛ զատարկ կոչես՝ ուղիդ պիտ՛ ըսես, Զի կ'անցընեն կեանքերնին կեանք շահելու, Եւ կեանքս յինքեան մարդուս համար յարգ չունի: Գատարկութեան մէջ կ'անցընէ նաւաստին իր գիշերներն ու ցորեկները. դատարկ՝ Գործարարանց մէջ մըշտահոս թըրտիքներն. Գատարկութիւն մարտիկներու՝ Զըսկուժներն Ու վըտանկները գէնքերու. և ազահ վաճառականը կ'անցընէ դատարկ կեանք. Զի զեղեցիկ երջանկութիւնը՝ զոր լոկ Մե՛տոս բնութիւնը կը խընդրէ կաթնոգին՝

Ոչ որ գայն չի բերեր ձեռք՝ ո՛չ իր անձին Համար և ո՛չ ուրիշին, ո՛չ հոգեբով, Ոչ թըրտիքով, ոչ հըսկուճով կամ վտանգով: Բայց իբրը դեղ դառն ու դըժնէ փափաքին՝ Որով մարդիկ սկիզբէն ի վեր աշխարհի Հառաչեցին անընդհատ գո՛ր ընդունայն երջանկութեան ետեւէն, մեզ պատրաստի՛ր էր բընութիւնը մեր թըշուառ կեանքին մէջ Պէտպէս պէտքեր, զորս հոգալու համար մենք Բտարկուէինք յոգնեցընել միտք ու ձեռք. Եւ զի զըւարթ չէ կարելի, գոնէ լի՛ Մահկանացու տոհմին սահէր երթար օրս. Եւ այս փափաքն այսպէս ծըփուս ու շըփոթ՝ Զըկարենար մեր սիրտը շատ խոշունգել: Անբաններուն այսպէս սերունդն անըսպառ, Որոնց՝ ոչինչ պակաս մենէ ընդունայն՝ Կտըծօրին մէջ ալ կ'ապրի նոյն իղձը միակ երջանկութեան, զըզաժժ կեանքի պէտքերնուն, Մենք կը տեսնեմք որ ատեննին կ'անցընեն Մենէ նըւազ տըխուր, նըւազ և տարագրտ, Ու ժամերուն չեն յամբութիւնը բարեր. Բայց սակայն մենք որ կը յանձնեմք կեանքը Ուրիշներու ձեռքը՝ որ հոգ, խնամ տանին, Մեր Մեզ կը խըէ ծանրագոյն հարկ մը՝ որուն Մենէ գատ ոչ որ կըրնայ խնամ ունենալ, Զոր և առանց վըշտ, առանց ձանձրոյթի՛ Զենք կատարեր. հարկ՝ կ'ըսեմ՝ կեանք սպառեւ. Անագորոյն, անյաղթելի հարկ՝ որմէ լու. Զեն կըրնար ոչ մըթերուած դէզ գանձերու, Ոչ հօտերու կոյտեր, յուճթի ոչ դաշտեր, Ոչ արթունիք, ուչ ծիրանի վերարկու Ազատել չեն կարող սերունդը մարդուն: Կարդ եթէ մէկի ունայն կեանքէն ձանձրանայ, Եւ վերին լոյսն իրեն դառնայ ատելի, Ու չըշըրջէ մարգասպան ձեռքն՝ իր անձին՝ Ու չընացած մահէն առաջ վազելու, Անբուժելի տենչին դաժան խածուածօրին՝